

յուստիանոսի մէջ: Մինչ Արգուլֆ եպօ. կը յիշէ Մատուռը իբր Կոստանդիանոսի մէկ աշխատութիւնը. Փոտիոս մը Գերեզմանի իր նկարագրութեան մէջ միտքը սեւեռած է միայն Ս. Հեղինէի: Արգէն յիշեցինք թէ Գողգոթայի մեծ եկեղեցիին նշանակութեան մասին Զ. դարէն մըցում մը կար Կոստանդիանոսի անուան և Մատուռ յորջորջումին մէջ: Թ. դարէն սկսեալ հիմնադիրին անուանակոչութիւնը կը զորանայ: Երբ կը կարդացուի Ս. Կոստանդիանոս, պէտք է հասկնալ Մատուռը: Երկու տիտղոսներն ալ որ անցելոյն կը նկատուին իբր միութեան գիծ մը, կը նշանակեն կաթողիկէ, որ համազօր է էթէրիայի մեծ եկեղեցիին, և կը յիշեցնէ Կոստանդիանոսէ առ Մակար գրուած նամակին բառագիրութիւնը: Ինչ անուսով ալ մկրտենք, Մատուռը ամէնուն համար Գիւտ Խաչի սրբավայրն է: Գեղեցիկ սանդուխէ մը կ'իջնէր Սոփրոնիոս պատրիարք այն տեղը «ուր պատկառելի Հեղինէ թագուհին գտաւ կենաց փայտը», ինչպէս կը գրէր ան իր Անակրէոնեան տաղերուն մէջ: Եպիփան վանականը Յովսէփ Արխաւարացիի սակ տեղւոյն տակը ցոյց կու տայ քառասուն յիշատակարան մը, ուր Թագուհին ազջկան մը վրայ կատարեց երեք խաչերուն փորձը: Նոյն վանականին այս հատուածը պէտք է նըկատել Ս. Հեղինէի ստորերկրեայ մատրան (crypte) ճարտարապետական ձևին հնագոյն յիշատակութիւնը. ձև մը որ հետագայ վերանորոգութիւններու ժամանակ խզմտօրէն յարգուած է: Մեծ եկեղեցիին կամ Մատրան մէկ զեանափոր տեղւոյն մէջ է ուր կը թաղուէին Երուսաղէմի պատրիարքները: Խաչի գիւտին ժողովրդային պատմութիւնները Գողգոթայի տեղւոյն նախնական իմաստը ընդարձակած՝ այս անունը կու տային նաև Գիւտի տեղւոյն համար: Այս պատճառաւ է որ երբեմն Մատուռը տեղականացած է Գողգոթայի մէջ, ինչպէս Դ. դարուն:

Ս. Կոստանդիանոսի եկեղեցին միշտ ա՛յն ընդարձակ պագիւլիքան է որուն մեծավայելչութիւնը նախնի հեղինակները կը փառաբանէին 614էն յառաջ: Մոսեստոսի աշխատութիւններուն աւարտումէն քիչ յետոյ, 630ին, Սոփրոնիոս զօր յիշեցինք վերեւ, շատ կը հիանայ անոր լոռ պայծառութեանը համար: Անունէր 65 կամ 75 սիւներ՝ վարի և վերի շարքերուն բաժնուած: Բնակելի սենեակները կը բացուէին վերի սրահներու վրայ, որ Մոսեստոսի ժամանակ կը կոչուէին վերի դարասեակներ: Շէնքին